

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
Ավտոմեքենայի վարձակալության

Երևան 2021 թ.

այսուհետ **Վարձակալ** և «ՀԱՐՅՈՒՐ ՍԵՐՎԻՍ» ՍՊԸ, հասցե Երևան, Մաշտոցի պող. 50ա, ի դեմս տնօրեն Նաիրի Գրիգորյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ **Վարձատու**, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

Սույն պայմանագրով **Վարձատուն** վճարի դիմաց **Վարձակալի** ժամանակավոր տիրապետմանը և օգտագործմանն է հանձնում Ավտոմեքենա (այսուհետ՝ **Ավտոմեքենա**)՝ առանց նրան կառավարման համար ծառայություններ մատուցելու: **Վարձակալի** և այն անձանց տվյալները, որոնց **Վարձատուն** սույն պայմանագրով տվել է Ավտոմեքենայի վարման իրավունք (այսուհետ **Վարորդ**) բերված են Հավելված 1-ում, վարձակալության տրամադրվող Ավտոմեքենայի տվյալները ներկայացվում է Հավելված 2-ում, վարձակալության ժամկետներն ու գինը՝ Հավելված 3-ում, լրացուցիչ ծառայությունների պայմանները՝ Հավելված 4-ում, ապահովագրության կանոններն ու հիմնական դրույթները՝ Հավելված 5-ում, որոնք հանդիսանում են սույն պայմանագրի անբաժանելի մասը:

2. Կողմերի իրավունքներն ու պարտավորությունները

Վարձատուի իրավունքներն ու պարտավորությունները

2.1. **Վարձատուն** պարտավորվում է Հավելված 3-ում նշված ժամկետներում և պայմաններով **Վարձակալին** տրամադրել Հավելված 2-ում նշված Ավտոմեքենան: **Վարձատուն** պարտավորվում է Ավտոմեքենան **Վարձակալի** տիրապետմանը և օգտագործմանը հանձնել սարքին վիճակում՝ առանց տեխնիկական անսարքությունների:

2.2. **Վարձատուն** որևէ պատասխանատվություն չի կրում Ավտոմեքենայում կորած կամ անհետացած անձնական իրերի, ինչպես նաև Ավտոմեքենայի ուղևորների առողջական խնդիրների համար:

2.3. **Վարձատուն** պարտավորվում է վարձակալության ժամկետում իրականացնել Ավտոմեքենայի այնպիսի տեխնիկական սպասարկումը, որոնց առաջացումը պայմանավորված չէ **Վարձակալի** մեղավորությամբ՝ բացառությամբ առաջին անհրաժեշտության սպասարկումից (պահեստային անիվի փոխարինում, դիմապակու մաքրման հեղուկի լիցքավորում, լուսարձակման լամպերի փոխարինում և այլն):

2.4. **Վարձատուն** պարտավորվում է խելամիտ ժամկետում, անհանգստություն չպատճառելով **Վարձակալին**, վերացնել Ավտոմեքենայի թերությունները կամ տրամադրել նույն խմբում (նույն տեսակի և նույն կարգի) գտնվող մեկ այլ Ավտոմեքենա, եթե **Վարձակալության** ժամկետում Ավտոմեքենան խափանվել է ոչ **Վարձակալի** մեղքով և նրա հետագա շահագործումը դարձել է վտանգավոր:

2.5. **Վարձատուն** պարտավորվում է Ավտոմեքենան **Վարձակալին** հանձնելիս տալ Ավտոմեքենայի շահագործման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:

2.6. **Վարձակալի** կողմից սույն պայմանագրի որևէ կետի խախտման դեպքում **Վարձատուն** իրավունք ունի հետ վերցնել Ավտոմեքենան, միակողմանի լուծել պայմանագիրը և չվերադարձնել որևէ գումար նրան՝ պահանջելով պատճառված վնասների լրիվ հատուցում: Պատճառված վնասների մեջ են ներառվում նաև բաց թողնված օգուտը, ինչպես նաև դատական գործընթաց սկսվելու դեպքում փաստաբանին վճարվելիք գումարները: **Վարձատուն** որևէ պատասխանատվություն չի կրում Ավտոմեքենայում թողած իրերի կորստի կամ վնասման համար: Ավտոմեքենայում թողած իրերի կորստի կամ վնասման համար պատասխանատվությունը կրում է **Վարձակալը**:

Վարձակալի / Վարորդի իրավունքներն ու պարտավորությունները

2.7. **Վարձակալը** Ավտոմեքենան ընդունելու պահից ստանձնում է Ավտոմեքենայի վարձակալության ողջ պատասխանատվությունը: Առանց **Վարձատուի** թույլտվության **Վարձակալն** իրավունք չունի Ավտոմեքենայի վարման իրավունք տալ որևէ այլ անձի:

2.8. **Վարձակալն** իրավունք չունի ենթավարձակալության հանձնել Ավտոմեքենան:

2.9. Ավտոմեքենան վարելիս **Վարորդը** չի կարող գտնվել ալկոհոլի, թմրանյութի, հոգեմետ կամ ինքնազգացողության վրա վնասակար ներգործող դեղերի ազդեցության տակ: Այն դեպքում, երբ **Վարորդը** Ավտոմեքենան կվարվի ալկոհոլի, թմրանյութի, հոգեմետ կամ ինքնազգացողության վրա վնասակար ներգործող դեղերի ազդեցության տակ (սույն պայմանագրում «ալկոհոլի ազդեցության տակ» հասկացվում է ալկոհոլի առկայությունը օրգանիզմում սկսած 0.01%-ից), ապա Ավտոմեքենային պատճառված ցանկացած վնասի, այդ թվում նաև ուղևորների, երրորդ անձանց և նրանց գույքին պատճառված վնասի հատուցման պարտականությունը կկրի **Վարորդը** կամ **Վարձակալը**:

2.10. **Վարձակալի** կամ **Վարորդի** կողմից երրորդ անձանց և նրանց գույքին պատճառված վնասի դեպքում վերջիններս **Վարձատուին** որևէ պահանջ ներկայացնելու իրավասություն չունեն և **Վարձատուն** որևէ պատասխանատվություն չի կրում:

Car Rental AGREEMENT

Yerevan 2021

henceforth a **Renter** and “HARYUR SERVICE” LLC, 50a, Mashtots Ave., represented by Nairi Grigoryan, acting based on the regulations, hereinafter referred to as a **Lessor**, signed the agreement on the following:

1. Subject of the agreement

The **Lessor**, due to this agreement, hands over to the **Renter** a Car (hereinafter a Car) for fee without providing him/her driving services. The personal data of the **Renter** and those persons whom the **Lessor** has authorized a driving right, according to this agreement (hereinafter a **Driver**) are stated in Appendix 1, the details of the hiring Car are presented in Appendix 2, the rental dates and the costs – in Appendix 3, the conditions of the additional services – in Appendix 4, the insurance rules and main provisions – in Appendix 5. These appendices comprise the inseparable part of the agreement.

2. The rights and obligations of the parties

The Lessor's rights and obligations

2.1. The **Lessor** is obliged to provide the **Renter** with the Car mentioned in the Appendix 2 within the terms and conditions stated in Appendix 3. The **Lessor** is obliged to return the Car to the **Renter** in a proper state without technical disrepairs.

2.2. The **Lessor** bears no responsibility for the lost or disappeared personal belongings left in the Car as well as for the passengers' health problems.

2.3. The **Lessor** is obliged to provide such a technical maintenance of the Car within the rental period which is not the **Renter's** fault with the exception of the first necessity maintenance (changing of a spare wheel, charging of the cleaning liquid of the windscreen, changing of luminescence lamps, etc.).

2.4. The **Lessor** is obliged to eliminate the defects of the Car within a reasonable period without causing annoyance to the **Renter** or to provide with another Car of the same group (of the same type and class) if the Car, during the rental period, has been damaged not by the **Renter's** fault and its further exploitation has become dangerous.

2.5. The **Lessor** is obliged to provide the **Renter** with all the necessary documents for running the Car when handing over the Car.

2.6. In case the **Renter** violates any clause of the agreement, the **Lessor** has the right to take the Car back, annul this agreement unilaterally and not to refund any amount and demand a full compensation of the losses. The losses also include the lost benefit as well as the sum to be paid to the advocate when undertaking a juridical process. The **Lessor** bears no responsibility for the damaged or lost things left in the Car. It is the **Renter** that bears responsibility for the damaged and lost things in the Car.

The Renter's/Driver's rights and obligations

2.7. The **Renter**, when receiving the Car, assumes whole responsibility for the Car rental. Without the **Lessor's** permission the **Renter** has no right to allow another person to drive the Car.

2.8. The **Renter** has no right to hand over to sub-lease the Car.

2.9. When driving the Car the driver cannot be under the influence of alcohol, narcotics, tranquillizers and harmful drugs for health. If the **Driver** runs the Car under the influence of alcohol, narcotics, tranquillizers and harmful drugs for health (in this agreement “under the influence of alcohol” means the existence of alcohol in the organism from 0.01%), the **Driver** or the **Renter** will be obliged to compensate any loss caused to the Car, passengers, third party or their estate.

2.10. In case of loss caused to the third party and their estate by the **Renter** or the **Driver**, the latter has no right to make demands to the **Lessor** and the **Lessor** cannot bear any responsibility. The insurance company, due to the “Mandatory insurance of the motor-transportation means” agreement, “Casco insurance agreement”, by the RA law on

վություն չի կարող կրել: Ապահովագրական ընկերությունը «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության» պայմանագրով, «Ավտոկասկո ապահովագրության պայմանագրով» և «Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրության մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում սուբրոգացիայի իրավունքը կարող է իրացնել բացառապես **Վարձակալի** կամ **Վարորդի** նկատմամբ:

2.11. **Վարձակալի** կամ **Վարորդի** գործողությունների (անգործության), Ապահովագրության պայմանագրի պայմանների խախտման դեպքում **Վարձատու**ն որևէ պատասխանատվություն չի կրում և Ապահովագրական ընկերությունը չի կարող **Վարձատուից** պահանջել ապահովագրական հատուցման գումարի վերադարձ (սուբրոգացիա):

2.12. Ավտոմեքենան շահագործելիս **Վարորդը** պարտավոր է պահպանել ճանապարհային երթևեկության կանոնները: **Վարորդը** պատասխանատու է խախտումների համար նախատեսված տուգանքների վճարման համար: **Վարորդը** Ավտոմեքենան պետք է կայանի կայանման համար թույլատրվող տարածքներում, կայանելիս փակի Ավտոմեքենայի դռներն ու բեռնախցիկը, միացնի հակաառևանգման համակարգը և Ավտոմեքենայում չթողնի նրա բանալիներն ու փաստաթղթերը: Բանալիներն ու փաստաթղթերը պետք է լինեն **Վարորդի** մոտ և նրա մշտական հսկողության տակ: Ավտոմեքենայի առևանգման դեպքում **Վարձակալը** պարտավոր է վերադարձնել Ավտոմեքենայի բանալիների և փաստաթղթերի բնօրինակները:

2.13. Տեխնիկական անսարքություն նկատելիս **Վարորդն** անմիջապես պարտավոր է այդ մասին տեղեկացնել **Վարձատուին**: Եթե Ավտոմեքենայի տեխնիկական անսարքությունը կամ նրա բաղկացուցիչ մասերի թերությունը/կորուստը առաջացել է **Վարորդի** մեղքով, ապա նա ամբողջությամբ պարտավոր է փոխհատուցել ծագած վնասը: Եթե Ավտոմեքենայի շահագործման ընթացքում ոչ **Վարորդի** մեղքով առաջացել է տեխնիկական անսարքություն կամ թերություն և Ավտոմեքենայի հետագա շահագործումը դարձել է վտանգավոր, ապա **Վարորդն** իրավունք ունի պահանջել փոխարինել Ավտոմեքենան նույն խմբում (նույն տեսակի և նույն կարգի) գտնվող այլ Ավտոմեքենայով:

2.14. Վթարի, ինչպես նաև Ավտոմեքենայի (կամ նրա բաղկացուցիչ մասերի) կորստի/գողության դեպքում **Վարորդը** պարտավոր է անհապաղ այդ մասին տեղյակ պահել **Վարձատուին** կամ Ապահովագրողին և Ոստիկանությանը (մինչև նույն ժամանակ վթարի դեպքում ավտոմեքենան տեղաշարժ չանելով), օժանդակել օրենքով սահմանված կարգով արձանագրություններ և տեղեկանքներ կազմելուն, ներկայացնել դրանք **Վարձատուին**:

2.15. Սույն պայմանագրում նախատեսված կետերի խախտման դեպքում Ավտոմեքենային պատճառված վնասն ամբողջությամբ, այդ թվում նաև բաց թողնված օգուտը հատուցվում է **Վարձակալի** կողմից:

3. Ավտոմեքենայի շահագործումը, հանձնում-ընդունումը

3.1. Ավտոմեքենան թույլատրվում է շահագործել միայն Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տարածքում: «Քարավան» ավտոարձակույթի կողմից հատուկ թույլտվության դեպքում Ավտոմեքենաները կարելի է շահագործել նաև Վրաստանի Հանրապետությունում (նվազագույնը 2 օր վարձակալության ժամկետով), ինչի մասին նշվում է Հավելված 4-ում: Բացի այդ, **Վարձակալը** պարտավորվում է ձեռք բերել ապահովագրություն (մանրամասները 5.11 կետում): Ավտոմեքենայի վազը սահմանափակված չէ:

3.2. Ավտոմեքենան **Վարձակալին** տրամադրվում է պատշաճ վիճակում՝ տեխնիկական անթերի, մաքուր և վառելիքի որաշակի լիցքավորմամբ: Ավտոմեքենայում առկա են անձրևանոց, քարտեզ, պահեստային անիվ, առաջին անհրաժեշտության գործիքներ, դեղատուփ և կրակմարիչ: **Վարձակալը** պարտավոր է հետևել Ավտոմեքենայի շահագործման ընդունված կանոններին և Ավտոմեքենան լիցքավորել բարձրորակ վառելիքի տեսակով: Ավտոմեքենայի լիցքավորման վառելիքի տեսակը պետք է համապատասխանի Հավելված 2-ում նշված տեսակին: Այն դեպքում, երբ Ավտոմեքենային վնաս կպատճառվի ոչ բարձրորակ վառելիքի լիցքավորման հետևանքով, ապա պատճառված վնասն ամբողջությամբ հատուցվում է **Վարձակալի** կողմից:

3.3. **Վարձակալը** պարտավոր է վերջնաժամկետին պատշաճ վիճակում հետ վերադարձնել Ավտոմեքենան, բոլոր փաստաթղթերը, լրացուցիչ սարքավորումներն ու պարագաները: Ավտոմեքենան, **Վարձատուին** հետ վերադարձնելիս, պետք է լինի չվնասված, տեխնիկական անթերի, մաքուր և վառելիքի նույնքան լիցքավորմամբ, որքանով որ հանձնվել է **Վարձակալին**:

3.4. Ավտոմեքենան մաքուր վիճակում **Վարձատուին** չհանձնելու դեպքում **Վարձակալից** գանձվում է 3.000 դրամ:

3.5. Ավտոմեքենան վառելիքի պակաս լիցքավորմամբ **Վարձատուին** չհանձնելու դեպքում **Վարձակալից** գանձվում է 500 դրամ լիցքավորման ծառայության վճար՝ վառելիքի յուրաքանչյուր պակաս լիտրի դիմաց:

3.6. Ավտոմեքենայի հանձնման և ընդունման ժամանակ **Վարձակալը Վարձատուի** մասնագետի հետ գնում է Ավտոմեքենան և կազմում նրա վիճակի վերաբերյալ համապատասխան հանձնման-ընդունման ակտ, որը հանդիսանում է սույն պայմանագրի անբաժանելի մաս: Ավտոմեքենայի վերաբերյալ ցանկացած թերություն արձանագրվում է հանձնման-ընդունման ակտում: **Վարձակալը** մինչև Ավտոմեքենան վարձակալության ընդունելը

“Mandatory insurance of the motor-transportation means” can exercise its subrogation rights exclusively towards the **Renter** or the **Driver**.

2.11. In case of the **Renter's** or the **Driver's** actions (inaction), breaking of the clauses of the insurance agreement, the **Lessor** does not bear any responsibility and the insurance company has no right to demand from the **Lessor** refunding of the sum of the insurance compensation (subrogation).

2.12. When running the Car the **Driver** should follow the traffic rules. The **Driver** is responsible for the fines of the infringements. The **Driver** should park the Car in special parking places. When parking the Car, he/she should close the doors and the boot of the Car, switch on the alarm warning system and not leave the keys and the documents in the Car. The keys and the documents should be with the **Driver** and under his/her permanent control. In case of Car theft, the **Renter** is obliged to return the keys of the Car and the originals of the documents.

2.13. If the **Driver** notices technical disrepairs, he/she should inform immediately about it the **Lessor**. In case there are technical disrepairs of the Car or defect/loss of its spare parts by the **Driver's** fault, he/she is obliged to compensate losses totally. If there are technical disrepairs or defects not by the **Driver's** fault during the running of the Car and the further exploitation of the Car is dangerous, he/she has the right to demand to change the hired Car by another one of the same group (same type and class).

2.14. In case of an accident and loss/theft of the Car (or its spare parts), the **Driver** is obliged to inform about it the **Lessor** or the insurer and the Police immediately (without moving the car in case of an accident), assist in making protocols and certificates defined by law and present them to the **Lessor**.

2.15. In case of violating the clauses of this agreement, the **Renter** is obliged to compensate the loss of the Car as well as the lost benefit of **Lessor**.

3. The exploitation of the Car, the pick up/drop off

3.1. It is permitted to run the hired Car only in the territories of the Republic of Armenia and Nagorno-Kharabagh. The cars can be exploited also on the territory of Georgia (for at least 2 days rentals) on the basis of an official authorization issued on behalf of "Caravan - Rent a Car" about which it is stated in Appendix 4. Besides, the **Renter** is required to acquire insurance (see clause 5.11). The run of the Car isn't limited.

3.2. The hiring Cars are provided to the **Renter** in a proper state, technically faultless, clean and with a definite quantity of fuel tank. In the hired Cars an umbrella, a map, a spare wheel, necessary tools, first-aid kit, fire-extinguisher are provided free of charge. The **Renter** is obliged to follow the rules of the Car exploitation and fill the Car with high-quality fuel. The quality of the fuel should correspond to the type mentioned in Appendix 2. If the Car is damaged because of not high-quality fuel, the Renter will completely compensate the loss.

3.3. The **Renter** is obliged to return the Car in a proper state on the deadline as well as all the documents, additional equipment and accessories. The Cars should be returned to the **Lessor** undamaged, technically faultless, clean and with the same quantity of fuel as delivered to the **Renter**.

3.4. In case the Car has been returned to the **Lessor** not in a clean state a fine of 3.000 AMD should be levied.

3.5. In case the Car has been returned to the **Lessor** with the less tank of fuel than it was delivered a refueling service charge of 500 AMD should be levied for each missing liter of fuel.

3.6. During the pick up/drop off of the Car the **Renter** should examine the Car together with the **Lessor's** specialist and should draw up a corresponding pick up/drop off protocol concerning its condition which is the inseparable part of this agreement. Any defect of the Car is recorded in the pick up/drop off protocol. The **Renter**, before hiring the Car, should inform the **Lessor** about the disrepairs or other defects of the Car and make a corresponding note in the pick up/drop off protocol. The

պարտավոր է Ավտոմեքենայի անսարքություններ կամ որևէ այլ թերություններ հայտնաբերելու դեպքում այդ մասին տեղեկացնել **Վարձատուին** և համապատասխան նշում կատարել հանձնման-ընդունման ակտում: **Վարձակալը** Ավտոմեքենայի ընդունման ժամանակ նշված թերություններից բացի հետագայում հայտնաբերված որևէ այլ թերության մասին հայտարարություն անելու իրավունքից զրկվում է:

3.7. Հանձնման-ընդունման ակտը երկկողմանի հաստատմամբ պահպանվում է յուրաքանչյուր կողմի մոտ և հիմք է հանդիսանում Ավտոմեքենայի թերություններն ու վնասները գննելիս և գնահատելիս, ընդ որում **Վարձակալն** ընդունում է, որ **Վարձատուն** իրավունք ունի որոշել, թե ում մեղքով են առաջացել թերություններն ու վնասները: Եթե **Վարձակալը** հրաժարվում է ստորագրել հանձնման-ընդունման ակտը Ավտոմեքենան հետ վերադարձնելիս, ապա **Վարձատուն** իրավունք ունի կազմել այն երկու վկաների ներկայությամբ և օգտագործել ըստ անհրաժեշտության:

3.8. Արգելվում է Ավտոմեքենան շահագործելիս տեղափոխել հրավտանգավոր բեռներ, պայթուցիկ նյութեր, մաքսանեղ ավարանքներ և օրենքով արգելված կամ վտանգավոր այլ բեռներ:

3.9. Արգելվում է Ավտոմեքենան օգտագործել մրցույթներում, շահագործել որպես քարշակ, որպես ուսումնական ավտոմեքենա կամ տաքսի ծառայության և բեռնափոխադրման նպատակով:

3.10. Արգելվում է Ավտոմեքենայի ինքնուրույն տեխնիկական վերանորոգումը **Վարձակալի** կողմից (բացառությամբ առաջին անհրաժեշտության սպասարկումից՝ պահեստային անիվի փոխարինում, դիմապակու մաքրման հեղուկի լիցքավորում, լուսարձակման լամպերի փոխարինում և այլն) և լրացուցիչ ղեկավարների տեղադրումը:

4. Վարձակալության ժամկետները, արժեքը և վճարումների կարգը

4.1. Վարձակալության սկզբնաժամկետը, վերջնաժամկետը և պայմանագրի արժեքը ներկայացված են Հավելված 3-ում:

4.2. Ավտոմեքենայի Վարձակալության գինը ներառում է դրա տեխնիկական սպասարկման ծախսերը, բոլոր պետական հարկերը, կարմիր գծանշումներով ավտոկայանատեղիների տուրքերը Երևան քաղաքում, անսահմանափակ վազքը, ԱՊՊԱ և ԿԱՍԿՈ սպահովագրությունների արժեքները ՀՀ և Լեռնային Ղարաբաղի տարածքներում, ինչպես նաև՝ Ավտոմեքենայի փոխարինումը տեխնիկական սպասարկման ընթացքում:

4.3. Ավտոմեքենայի Վարձակալության գինը չի ներառում վառելիքի, ավտովազման, այլ կայանատեղերի վճարները և ճանապարհային երթևեկության խախտումների տուգանքները:

4.4. Ավտոմեքենան վերջնաժամկետից շուտ հետ վերադարձնելու դեպքում կատարվում է վերահաշվարկ համաձայն փաստացի վարձակալված օրերի և դրան համապատասխան գնացուցակի, ընդ որում՝ անկախ հետ վերադարձման ժամից, այդ օրը և հաջորդ օրը հաշվարկվում են որպես լիարժեք վարձակալված օրեր: Վերահաշվարկի արդյունքում **Վարձակալին** հետ է վերադարձվում լրացուցիչ գումարն ամբողջությամբ, եթե վերջինս սույն պայմանագրով սահմանված վերջնաժամկետից առնվազն 48 ժամ առաջ այդ մասին տեղյակ է պահել **Վարձատուին**, հակառակ դեպքում որևէ գումար հետ չի վերադարձվում:

4.5. Վարձակալության ժամկետը երկարաձգելու դեպքում անհրաժեշտ է նախօրոք տեղյակ պահել **Վարձատուին** և **Վարձատուի** կողմից համաձայնություն տալու դեպքում, կնքել համաձայնագիր երկարաձգման վերաբերյալ:

4.6. Ավտոմեքենան նախատեսված ժամկետից ուշ վերադարձնելու դեպքում, **Վարձակալը** պարտավոր է վճարել.

4.6.1. մինչև 3 ժամ ուշացնելու դեպքում՝ Վարձակալության **1 օրվա գնի** 25%-ի չափով

4.6.2. 3 – 6 ժամ ուշացնելու դեպքում՝ Վարձակալության **1 օրվա գնի** 50%-ի չափով

4.6.3. 6 ժամից ավելի ուշացնելու դեպքում՝ Վարձակալության **1 օրվա գնի** 100%-ի չափով

4.6.4. Առանց **Վարձատուի** նախագգուշացման և համաձայնության Ավտոմեքենան նախատեսված ժամկետից ուշ վերադարձնելու դեպքում, անկախ ուշացման պատճառներից, **Վարձակալը** պարտավոր է վճարել վերոհիշյալ աղյուսակի կրկնակի չափով:

4.7. Ավտոմեքենան վերջնաժամկետից 24 ժամ հետո չվերադարձնելու դեպքում **Վարձատուն** կարող է դիտել դա որպես առևանգում և հետ վերցնել Ավտոմեքենան ցանկացած վայրից առանց **Վարձակալին** գգուշացնելու կամ դիմել Ոստիկանություն՝ Ավտոմեքենան բերման ենթարկելու, **Վարձակալին** պատասխանատվության կանչելու պահանջով: Այդ դեպքում Ավտոմեքենայում թողած իրերի համար **Վարձատուն** պատասխանատվություն չի կրում:

4.8. **Վարձակալը** պարտավոր է վճարել լրացուցիչ ծախսերի ու տուգանքների համար, որոնք կհաշվարկվեն **Վարձատուի** կողմից Ավտոմեքենան հետ ընդունելու պահին՝ սահմանված գնացուցակի համաձայն: Այդ նպատակով **Վարձակալը** պայմանագրի ստորագրելու պահին պարտավոր է ապահովել **Գրավի գումարի** առկայություն, որի միջոցով անհրաժեշտության դեպքում ծածկվելու են վերոհիշյալ ծախսերը (դրանք ապահովագրության գումարներով չփոխհատուցվող կամ ապահովագրական պատահար

Renter, except for the recorded defects in the pick up/drop off protocol, has no right to indicate further defects.

3.7. Each party keeps the pick up/drop off protocol bilaterally concluded which is the cornerstone when examining and evaluating the defects and losses of the Car. Moreover, the **Renter** accepts that the **Lessor** has the right to determine who is responsible for the defects and losses. If the **Renter** refuses to sign the pick up/drop off protocol when returning the Car, the **Lessor** has the right to draw it up in the presence of 2 witnesses and use it if necessary.

3.8. It is forbidden to transport inflammable goods, explosives, smuggler or other dangerous and interdicted goods by law when running the Car.

3.9. It is forbidden to drive the Car at contests and exploit as a tractor or an educational Car, with the aim of taxi service and goods transportation.

3.10. It is forbidden to repair technically the Car on one's own by the **Renter** (with the exception of the first necessity maintenance such as changing of a spare wheel, charging of the cleaning liquid of the windscreen, changing of luminescence lamps, etc.) and to install constituent parts.

4. The rental dates, cost and payment order

4.1. The initial rental period, the deadline and the cost of the agreement are presented in Appendix 3.

4.2. The rental price of the Car includes the charges for the technical maintenance, all the state taxes, red lined public parking lots in Yerevan city, unlimited mileage, compulsory MTPL and CASCO insurance costs on the territories of the RA and Nagorno-Karabakh, as well as the change of the Car during its technical maintenance.

4.3. The rental price of the Car does not include the charges of fuel, Car wash, other parking lots and fines foreseen for infringements.

4.4. In case the hired Car is returned earlier than the deadline is, a recalculation is done based on the actual rental days and the corresponding price-list. Moreover, regardless of the returning hour, that day, as well as the following day are considered as full rental days. In the result of the recalculation the additional sum is returned to the **Renter** fully if the latter has informed the **Lessor** about it at least 48 hours before the deadline fixed in the contract. On contrary, no sum is refundable.

4.5. In case of prolonging the rental period it is necessary to inform the **Lessor** in advance and after getting the **Lessor's** consent, he/she should sign a new agreement concerning the extension of the rental duration.

4.6. In case of returning the hired Car later than the deadline is the **Renter** is required to pay at the following sums:

4.6.1. at an amount of 25% of **one day rental price** in case of delaying up to 3 hours

4.6.2. at an amount of 50% of **one day rental price** in case of delaying for 3 to 6 hours

4.6.3. at an amount of 100% of **one day rental price** in case of delaying for 3 to 6 hours

4.6.4. In case of returning the hired Car later than the deadline is, regardless of the delaying reasons, without warning and agreement, the fines at twice the price of the abovementioned schedule are levied.

4.7. If the **Renter** doesn't return the hired Car after 24 hours of the foreseen deadline, the **Lessor** can consider it as a theft and take the hired Car from any place without warning the **Renter** or can apply to the Police in order to take back the Car and proceedings against the **Renter**. In such cases the **Lessor** does not bear responsibility for the left things in the Car.

4.8. The **Renter** is obliged to make all the payments for the additional expenses and fines which have been calculated by the **Lessor** at the time of returning the Car according to the presented by him price-list. Therefore, **Renter** should provide with a **Deposit** when signing the contract by means of which the listed above expenses should be covered in case of necessity (those which are not compensated by insurance or are not considered as an insurance case).

4.9. It is possible to provide **Deposit** either via credit card or paying in

չհամարվող ծախսերն են):

4.9. **Գրավի գումարը** կարելի է ապահովել բանկային քարտով կամ կանխիկ դրամն ի պահ հանձնելով (այդ մասին նշում է կատարվում Հավելված 3-ում): ԲԱՆԿԱյին քարտի պարագայում կատարվում է **Գրավի գումարի** չափով սառեցում քարտից, եթե **Վարձակալը** չունի “սուպեր ծածկույթ” (կետ 5.9), իսկ եթե **Վարձակալը** ձեռք է բերել “սուպեր ծածկույթ”, ապա սույն պայմանագիրը կնքելով տալիս է իր համաձայնությունը լրացուցիչ ծախսերի ու տուգանքների գումարը քարտից գանձելու: **Գրավի գումարը** սառեցնելիս՝ հարկավոր է թողնել նույն բանկային քարտի տվյալները (քարտի համարը և գործողության ժամկետը): Սուպեր ծածկույթ ձեռք բերելիս հարկավոր է թողնել կա՛մ որևէ բանկային քարտի տվյալներ (քարտի համարը և գործողության ժամկետը), կա՛մ 70.000 դրամ գրավի գումար (ոչ ապահովագրական դեպքերի համար):

4.10. Եթե **Վարձակալը** Ավտոմեքենան պատշաճ վիճակում և ճիշտ ժամկետին հանձնում է **Վարձատուին**, ապա **Գրավի գումարն** ամբողջությամբ հետ է տրվում նրան: Եթե առաջացել են լրացուցիչ ծախսեր, որոնք չեն գերազանցում **Գրավի գումարը**, ապա դրանք փոխհատուցվում են **Գրավի գումարի** հաշվին, իսկ մնացորդը հետ է տրվում **Վարձակալին**: Եթե լրացուցիչ ծախսերը գերազանցում են **Գրավի գումարը**, ապա որևէ գումար **Վարձակալին** հետ չի տրվում, և ավելին՝ նրանից գանձվում է նաև լրացուցիչ ծախսերի չփոխհատուցված մասը:

5. Ապահովագրությունը և պատասխանատվությունը վնասի դեպքում

5.1. Ավտոմեքենան ապահովագրված է ԱՊՊԱ և ԿԱՄԿՈ պայմաններով: **Վարձակալը** կրում է ամբողջական պատասխանատվություն ապահովագրական ընկերության նկատմամբ: Սույն պայմանագիրը ստորագրելով **Վարձակալը** հաստատում է, որ ծանոթացել է և ընդունել է նաև ապահովագրության կանոններն ու դրույթները (Հավելված 5):

5.2. Վարձակալության հանձնված Ավտոմեքենային կամ երրորդ անձանց (նրանց գույքին, առողջությանը, ուղևորներին) պատճառված վնասը Ապահովագրական ընկերության կողմից չհատուցվելու դեպքում, երբ ապահովագրական հատուցման տրամադրման մերժումը պայմանավորված է **Վարձակալի** գործողություններով (անգործությամբ), այդ թվում ապահովագրության կանոնների խախտման կամ այնպիսի գործողությունների դեպքում, երբ պատճառված վնասը չի դիտարկվել ապահովագրական, ապա Ավտոմեքենային, երրորդ անձանց (նրանց գույքին, առողջությանը) պատճառված վնասը ենթակա է հատուցման **Վարձակալի** կողմից:

5.3. ԱՊՊԱ-ն ապահովագրվում է այն վնասները, որոնք առաջացել են տրանսպորտային միջոցի օգտագործումից մյուս՝ տուժող կողմին (երրորդ անձանց), պատճառված վնասներից և տուժողի գույքին պատճառված վնասներ: Երրորդ անձանց վնասները փոխհատուցվում են հետևյալ կերպ.

5.3.1. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տարածքներում՝ անձնական վնասներ՝ տուժողի առողջությանը պատճառված վնասներ և դրանց հետևանքով կորցրած աշխատավարձ/եկամուտներ, ինչպես նաև՝ տուժողի մահ - մեկ ապահովագրական պատահարի համար՝ 3,000,000 ՀՀ դրամ;

5.3.2. Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի տարածքներում՝ տուժողի գույքին պատճառված վնասներ՝ առավելագույնը 1.800.000 ՀՀ դրամ;

5.3.3. Եթե երրորդ անձի վնասն ավելին է նշվածից, ապա **Վարձակալը** պարտավոր է փոխհատուցել վնասի լրացուցիչ մասը:

5.4. Ապահովագրական ընկերության կողմից երրորդ անձանց պատճառված վնասներն ամբողջովին չհատուցելու կամ ընդհանրապես չհատուցելու դեպքում վնասների հատուցման պարտականություն կրում է բացառապես **Վարձակալը**: **Վարձատուն** Ավտոմեքենայի վարձակալության հանձնված ամբողջ ժամանակահատվածի համար **Վարձակալի** կողմից երրորդ անձանց պատճառված վնասների համար որևէ պատասխանատվություն չի կրում:

5.5. ԿԱՄԿՈ-ն ապահովագրում է Ավտոմեքենայի և **Վարորդի** անձնական վնասների փոխհատուցումը՝ ճանապարհատրանսպորտային պատահարների, հրդեհի, առևանգման և մյուս ապահովագրական պատահարների դեպքում՝ հետևյալ կերպ.

5.5.1. **Վարորդի** անձնական վնասներ՝ առավելագույնը 3.000.000 դրամ

5.5.2. Ավտոմեքենայի վնասներն ամբողջությամբ՝ համաձայն ապահովագրության պայմանների՝ բացառությամբ չփոխհատուցվող գումարը

5.6. **Վարձակալը** պահպանելով սույն պայմանագրի կետերը էապես սահմանափակում է իր ֆինանսական պատասխանատվությունը, եթե դրանց մասին ժամանակին տեղյակ է պահել **Վարձատուին** (անհրաժեշտության դեպքում նաև Ոստիկանությանը):

5.7. Ցանկացած պատահարի, կորստի կամ վնասի դեպքում **Վարձակալը** պետք է ներկայացնի օրենքով սահմանված կարգով իրավասու մարմնի կողմից կազմված արձանագրություն, ինչպես նաև պատահարի մասնակից մյուս կողմերի կամ վկաների մասին բավարար տվյալներ:

5.8. Եթե **Վարձակալը** պահպանել է ճանապարհային երթևեկության կանոնները, սույն պայմանագրի (այդ թվում ապահովագրության) դրույթները, ապա ապահովագրական պատահարի դեպքում նրա պատասխանատվությունը Ավտոմեքենայի և նրա ուղևորների նկատմամբ սահմանափակվում է **գրավի գումարով** ընդ որում.

5.8.1. Եթե ապահովագրական պատահարի մեղավոր կողմը **Վարձակալն** է

cash (it is stated in Appendix 3). In case of credit card provision the deposit sum will be held if **Renter** does not acquire “super cover” (see clause 5.9), otherwise, if he acquires “super cover”, his consent will be sufficient for charging the corresponding amount from his card. When holding a **Deposit**, it is required to leave the same bank card details (card number and validity date). When purchasing super cover, it is required to leave either any bank card details (card number and validity date) or the deposit at 70.000 AMD (for non-insurance cases).

4.10. If the rented Car is returned to the **Lessor** in a proper state and in due time, the **Deposit** is fully refunded to the **Renter**. If revealed additional expenses exceed the **Deposit**, no amount is refunded to the **Renter**; moreover, the sum of the additional expenses, which hasn't been compensated by the **Deposit**, is levied from him extra.

5. The insurance and responsibility in case of loss

5.1. The Car is insured by compulsory MTPL and CASCO conditions. The **Renter** bears a full responsibility towards the insurance company. By signing this rental agreement the **Renter** confirms that he/she has got acquainted and has also accepted the provisions of the insurance agreements (Appendix 5).

5.2. In case the Insurance company does not compensate the loss of the hired Car or the third party (their estate, health, passengers), when the refusal to provide insurance compensation is due to the **Renter's** actions (inaction), including the violations of the insurance rules or in such cases when the loss isn't linked to insurance, the **Renter** is obliged to compensate the loss to the Car, third party (their estate, health).

5.3. Compulsory MTPL insures those losses which have been caused by the transportation means to the injured party (third party), its estate. The losses of the third party are compensated by the following way:

5.3.1. on the territories of the Republic of Armenia and Nagorno-

Karabakh - personal losses (injuries to health and lost wages/incomes as well as the injured party's death) - 3.000.000 AMD should be paid for an insurance accident;

5.3.2. on the territories of the Republic of Armenia and Nagorno-

Karabakh - losses to the injured party's estate - 1.800.000 AMD utmost should be paid;

5.3.3. If the third party's loss is more, the **Renter** is obliged to

compensate the loss additionally.

